



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան

« 11 » 06 2020թ N 645-Չ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՂՈՔԱՑՄԱՆ 19-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 27-իվ N 854-Լ որոշման 2-րդ կետը.

**հ ր ա մ ա յ ու մ ե մ .**

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառման շրջանակում շահառուների ընտրության և միջոցառման իրականացման մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նաիրա Մարգարյանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

**ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՂՈՔԱՑՄԱՆ 19-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Սույն կարգի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի N 854-Լ որոշմամբ հաստատված՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) շրջանակում շահառուների ընտրության և միջոցառման իրականացման մոնիթորինգի իրականացումը:
2. Սույն կարգում «շահառու» եզրույթն օգտագործվում է Միջոցառման մեջ կիրառված իմաստով:
3. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված բանկերի և վարկային հաստատությունների միջոցով արտոնյալ վարկավորման նպատակով Միջոցառման շրջանակներում ՆԱԿ-ի կողմից երաշխիքներ տրամադրվում են այն սկսնակ շահառուներին, որոնք ապահովում են ստորև ներկայացված բոլոր պահանջներին համապատասխանությունը.
  - 1) համապատասխանում են Միջոցառման 3-րդ կետով նախատեսված պահանջներին.
  - 2) ներկայացնում են Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից հաստատված կարգին համապատասխան մշակված և հաստատված բիզնես մոդել.
  - 3) Նախարարության կողմից սահմանված մեթոդաբանությամբ անցել են ձեռնարկատիրական ուսուցում/վերապատրաստում կամ ներկայացնում են համապատասխան ձեռնարկատիրական հմտությունների առկայության մասին Նախարարության կողմից սահմանված պահանջներին բավարարող հավաստագիր.
  - 4) սույն կարգի 5-րդ կետով նախատեսված գնահատող հանձնաժողովի կողմից ընտրվել են որպես Միջոցառման շահառու.
  - 5) տրամադրում են ՆԱԿ-ի կողմից սահմանված կարգով աքսելերացման գործիքներից օգտվելու վերաբերյալ գրավոր համաձայնություն.
  - 6) վարկի ստացման նպատակով տրամադրում են անհատ ձեռնարկատիրոջ կամ կազմակերպության սեփականատիրոջ անձնական երաշխավորություն:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված բանկերի և վարկային հաստատությունների միջոցով արտոնյալ վարկավորման նպատակով Միջոցառման շրջանակներում ՆԱԿ-ի կողմից երաշխիքներ տրամադրվում են նորարարական զարգացման գաղափարներին այն դեպքում, եթե ապահովված է ստորև ներկայացված բոլոր պահանջներին համապատասխանությունը.
  - 1) այդ նպատակով դիմած շահառուն համապատասխանում է Միջոցառման 3-րդ կետով նախատեսված պահանջներին.
  - 2) ներկայացնում են Նախարարության կողմից հաստատված կարգին համապատասխան մշակված և հաստատված նորարարական զարգացման գաղափար.
  - 3) Նախարարության կողմից սահմանված մեթոդաբանությամբ անցել են նորարարական զարգացման ուսուցում/վերապատրաստում կամ ներկայացնում են համապատասխան վերապատրաստում անցած լինելու մասին Նախարարության կողմից սահմանված պահանջներին բավարարող հավաստագիր.
  - 4) սույն կարգի 5-րդ կետով նախատեսված գնահատող հանձնաժողովի կողմից ընտրվել են որպես Միջոցառման շահառու:
5. Սույն կարգի իմաստով գնահատող հանձնաժողով է համարվում Նախարարության կողմից հաստատված կազմով և առնվազն 5 անդամից կազմված հանձնաժողովը, որը պետք է ներառի երկու ներկայացուցիչ ՆԱԿ-ից, մեկ ներկայացուցիչ՝ Նախարարությունից և առնվազն երկու ներկայացուցիչ՝ ՓՄՁ շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններից:
6. Գնահատող հանձնաժողովի որոշմամբ անձն ընտրվում է որպես Միջոցառման շահառու, եթե վերջինիս՝ Նախարարության կողմից հաստատված չափորոշիչներով և դրանց տրվող կշիռներով հանձնաժողովի անդամների գնահատականների միջին արդյունքով անձը հաղթահարում է Նախարարության կողմից հաստատված՝ աջակցության տրամադրման համար բավարար համարվող շեմը:
7. Գնահատող հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե նիստին մասնակցել են (առկա կամ հեռավար կարգով) հանձնաժողովի բոլոր անդամները: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կողմից անձի՝ Միջոցառման շահառու լինելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված, եթե դրան կողմ է քվեարկում ՆԱԿ-ի առնվազն մեկ ներկայացուցիչ:
8. Սույն կարգի 3-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված աքսելերացման գործիքները առնվազն պետք է ներառեն՝
  - 1) սույն կարգին համապատասխան ընտրված շահառուների անհատական քույզի նշանակում,
  - 2) քույզի կողմից արտոնյալ պայմաններով վարկավորված շահառուին խորհրդատվական աջակցության տրամադրում վարկի սպասարկման առաջին տարվա ընթացքում,
  - 3) քույզի կողմից ՆԱԿ-ին առնվազն եռամսյակային հաշվետվությունների ներկայացում՝ վարկառուի ֆինանսատնտեսական վիճակի, Միջոցառման

շրջանակներում իրականացվող նորարարական զարգացման գաղափարի կամ սկսնակ ձեռնարկատիրական գործունեության ընթացքի և ձեռնարկատիրական գործունեության էական ռիսկերի մասին:

9. Միջոցառման իրականացման մոնիթորինգը իրականացվում է Նախարարության, ինչպես նաև ՆԱԿ-ի կողմից:
10. ՆԱԿ-ի կողմից Միջոցառման իրականացման մոնիթորինգը ներառում է Միջոցառմամբ սահմանված կարգով վարկավորված շահառուների կողմից սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված բիզնես մոդելի և 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված նորարարական զարգացման գաղափարի իրագործման պլանի իրականացման, շրջանառության, աշխատողների քանակի, աշխատավարձի ֆոնդի և վերջիններիս կողմից վճարված հարկերի վերաբերյալ առնվազն եռամսյակային հաշվետվության ներկայացում Նախարարությանը:
11. Նախարարության կողմից Միջոցառման իրականացման մոնիթորինգը կարող է ներառել՝
  - 1) Միջոցառմամբ սահմանված կարգով վարկավորված շահառուների մոտ կամ հեռակա կարգով վարկային միջոցների ծախսման ստուգում,
  - 2) ՆԱԿ-ից սույն կարգի 9-րդ կետով նախատեսված հաշվետվությունների հավաքագրում և վերլուծություն:
12. Միջոցառման իրականացման մոնիթորինգի շրջանակներում Նախարարությունն իր հայեցողությամբ կարող է ՆԱԿ-ից պահանջել կոնկրետ վարկի, դրա ծախսման ուղղությունների և վարկառուի վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ: Նախարարության կողմից սույն կետով սահմանված տեղեկատվության հարցման ստացման պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում հայցվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը պետք է տրամադրվեն Նախարարությանը: